ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«19» դեկտեմբեր 2021թ. N ԱՊՈ/58-2021

ք. Արմավիր

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 25 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշումը, վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման նպատակով.

Որոշում եմ՝

1. Ստեղծել զբաղվածության աջակցության Արմավիրի մարզային նոր հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2016 թվականի մարտի 16-ի «Զբաղվածության աջակցության Արմավիրի մարզային հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2005 թվականի ապրիլի 12-ի N 40 կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 25 կարգադրությունը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Ա. Մեխակյանին՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մարզպետ՝ *Հ. Մաթևոսյան*

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Недействительная подпись

VERIFIED OCSP 19.02.2021 11:48:02 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի

2021 թվականի դեկտեմբերի «19»-ի ՄՈ/152-2021 որոշման

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՁԱԿՅՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Մեխակյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ

Անդամներ՝

Հ. Հարությունյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ.
Լ. Աբրահամյան	-ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության Արմավիրի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Ա. Թովմասյան	-Արմավիրի տարածքի «կրթության և գիտության աշխատողների արհեստակցական կազմակերպության» նախագահ
Ս. Սարգսյան	-«Արմավիրի մարզի արտադրողների և գյուղատնտեսության գործատուների տարածքային միություն» ԳՄ նախագահ
Ռ. Գրիգորյան	-«Վաղարշապատի կանանց խորհուրդ» հասարակական կազմակերպության նախագահ
Ա. Սիմոնյան	-«Տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգող խորհրդի» ներկայացուցիչ:

Ս. Խաչատրյան -«Տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգող խորհրդի» ներկայացուցիչ

Գլխավոր քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան

19.02.2021

VERIFIED OCSP 19.02.2021 10:51:19 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023